# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔ

**ք. Վարդենիս** **22/03/2024**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 25 անդամներ:

Բացակա էին՝ Արտակ Մանուկյանը, Արամ Մելքոնյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**

**Նիստը վարում էր ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ահարոն Խաչատրյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կամո Զարոյանը**

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Սոցիալական աջակցության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի դրույթներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության 18-րդ հոդվածի դրույթներով՝ հիմք ընդունելով <<Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության>> բաժնի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները՝ համայնքի ավագանին որոշում է.

Վարդենիս համայնքի բյուջեի սոցիալական ծախսերից 4729 հոդվածից տրամադրել դրամական աջակցություն Վարդենիս համայնքի անապահով բնակիչներ՝

1.Տաթևիկ Գևորգյան/Վարդենիս/ 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ

2.Սիս Հովհաննիսյան/Ակունք/ 80000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ

3.Վազգեն Նավասարդյան/Տորֆավան/ 80000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ

4.Արմեն Հովեյան/Վարդենիս/ 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ

5.Մարգարիտ Մկրտումյան/Վարդենիս /30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ

6.Շուշանիկ Բաղդյան/Փամբակ/50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ

7.Մյասնիկ Ղազարյան /Սոթք/ 230000 /երկու հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամ

8.Ռոզա Աբրահամյան/Վարդենիս/ /30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ

9.Արծվիկ Շահբազյան/Վարդենիս/ 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ

10.Ռոզա Քոչարյան /Գեղամասար/ 40000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ

11.Հայարփի Մուրադյան/Սոթք/ 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ

12.Արմենուհի Մարտիրոսյան/Սոթք/ 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ

13.Մակիչ Մկրտչյան/Վարդենիս/ 60000 / վաթսուն հազար/ ՀՀ դրամ

14.Մանյա Կարապետյան/Վարդենիս/ 80000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ

15.Սուսաննա Գրիգորյան/Վանևան/30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ

16.Սերյոժա Բադեյան/Վարդենիս/ 40000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ

17.Արտեմ Բարսեղյան/Վարդենիս/30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ

18.Սուսանբար Հարությունյան/Սոթք/30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ

19.Սայադ Հարությունյան/Շատվան/ 40000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ

20.Քրիստինե Նավոյան /Ակունք/ 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ

21.Հայկ Մանուկյան /Ակունք/ 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ

22.Դավիթ Աղաբեկյան /Ակունք/ 45000 /քարասունհինգ հազար/ ՀՀ դրամ

23.Կառլեն Պողոսյան /Ակունք/ 40000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ

24.Հռիփսիմե Բայրամյան /Արեգունի/ 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ

25.Արամայիս Քոչարյան /Կարճաղբյուր/ 40000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ

26.Խաչիկ Հովեյան /Վարդենիս/ 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ

27.Վալոդյա Հովագիմյան /Վարդենիս/ 80000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ

28.Սամվել Բեգլարյան/ Կախակն/ 40000/քառասուն հազար/ ՀՀ դրամ

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ դիմումները հավաքվել են դեկտեմբեր ամսից, հունվարին նիստ չի եղել, սոցիալական աջակցություն չի տրամադրվել, դիմումները մեծ թիվ են կազմում, դրվում են միայն ծայրահեղ ծանր վիճակում գտնվող անձանց դիմումները: Համայնքի ղեկավարը առաջարկեց հաստատել ըստ ցանկի, հարցն ընդունվեց միաձայն: Քվեարկության արդյունքում 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 34-Ա/

Լսեցին

***<<ԱՍՏՂԱՎԱՐԴ>> ՀԿ ՀԱՃԱԽՈՂ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՁՄԵՌՎԱ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՋԵՌՈՒՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՓԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ</u>/***

Ղեկավարվելով <<Սոցիալական աջակցության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով <<ԱՍՏՂԱՎԱՐԴ>> ՀԵԾՀԿ -ի 17.01.2024 թվականի գրությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.<<ԱՍՏՂԱՎԱՐԴ>> ՀԵԾՀԿ-ում ծառայությունները լիարժեք մատուցելու համար աջակցել 300.000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ առաջարկելով հատկացնել երկու հարյուր հազար դրամ: Ելույթով հանդես եկավ Ավագանու անդամ Մելանյա Եփրեմյանը նշելով, որ տարածքը բավականին մեծ է տարբեր կազմակերպություններ և ծնողներ որոշ չափով օժանդակել են և վճարել գումարը, սակայն դեռ կա երեք հարյուր հազար դրամ պարտք: Ելույթով հանդես եկավ ավագանու անդամ Սաթենիկ Մինասյանը՝ նշելով, որ ահռելի մեծ աշխատանք է կատարվում <<ԱՍՏՂԱՎԱՐԴ>> ՀԵԾՀԿ-ում և չենք կարող մերժել գումարի տրամադրումը: Ավագանու անդամ Մելանյա Եփրեմյանը նշեց, որ կենտրոնը ստեղծել է շուրջ 15 աշխատատեղ և կենտրոն հաճախում են ավելի քան 180 երեխաներ: Առաջարկությամբ հանդես եկավ ավագանու անդամ Արման Մաթևոսյանը, որ հաջորդ ամսվանից ավագանիները իրենց սեփական միջոցներից որոշակի չափով նվիրատվություն անեն <<ԱՍՏՂԱՎԱՐԴ>> ՀԵԾՀԿ-ին, որին միաձայն բոլորը: Համայնքի ղեկավարը առաջարկեց երեք հարյուր հազար դրամ տրամադրել <<ԱՍՏՂԱՎԱՐԴ>> ՀԵԾՀԿ-ին, առարկություններ չեղան, 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 33-Ա/

Լսեցին

***ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023Թ. N 177-Ա, N 178-Ա, N 179-Ա, N 180-Ա, N 182-Ա, N 183-Ա և N 184-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. <u>ԿԱՄՈ ՁԱՐՈՅԱՆ</u>/***

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Վարդենիս համայնքի ավագանու 28 դեկտեմբերի 2023 թվականի N 177-Ա, N 178-Ա, N 179-Ա, N 180-Ա, N 182-Ա, N 183-Ա և N 184-Ա որոշումների բովանդակության մեջ <<Ղեկավարվելով

<<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է>> տողը փոխարինել <<Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է.>> տողով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ խոսքը վերաբերվում է նախկինում հաստատված գույքահարկի զիջումներին, որտեղ զիջման հղումը տրված էր գույքահարկի մասին օրենքին, սակայն պետք է լիներ հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ կետի հղումը, ուստի առաջարկեց ավագանիներին տալ համաձայնություն նշված փոփոխությունը կատարելու համար:
Հրացը դրվեց քվեարկության, արդյունքում 25 կողմ, 0դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32-Ա/

Լսեցին
***ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍՈԹՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑ 20 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ</u>/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 67-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, Վարդենիս համայնքի ավագանին **որոշում է.**

1.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Սոթք բնակավայրի 5-րդ փողոց 20 հասցեի (ծածկագիր 05-080-0041-0025, սեփականության իրավունքի վկայական 12032024-05-0135) 0,12873հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով:

2. Մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքով՝ 1քմ-ի համար 141.9 (մեկ հարյուր քառասունմեկ ամբողջ ինը) ՀՀ դրամ (19-րդ գոտի):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ կառավարության կողմից սահմանամերձ բնակավայր արտոնություններից օգտվող բնակավայրերում իրականացվում է բնակարանաշինության ծրագրեր, ուստի առաջարկեց Սոթք բնակավայրի 05-080-0041-0025 ծածկագրով 0,12873հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով: Հարցը դրվեց քվեարկության, առաջարկություններ և առարկություններ չեղան, 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31-Ա/

Լսեցին

***ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ Օ. ՍԻՄՈՆՅԱՆ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 10 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ</u>/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ Վարդենիս համայնքի ավագանին որոշում է.

1.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Ակունք բնակավայրի Օ. Սիմոնյան փողոց 3-րդ նրբանցք 10 հասցեի (ծածկագիր 05-008-0096-0013, սեփականության իրավունքի վկայական 06022024-05-0034) 0,1հա բնակավայրերի այլ հողեր հողատեսքի հողը օտարել աճուրդ վաճառքի միջոցով:
2. Մեկնարկային գինը սահմանել, կադաստրային արժեքով 1քմ-ի համար 336,6 (երեք հարյուր երեսունվեց ամբողջ վեց) ՀՀ դրամ (17-րդ գոտի):

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավարը՝ հայտնելով, որ խոսքը վերաբերվում է Ակունք բնակավայրի 05-008-0096-0013 ծածկագրով 0,1հա բնակավայրերի այլ հողեր հողատեսքին, որի մեկնարկային գինը սահմանվել է կադաստրային արժեքով 1քմ-ի համար 336,6 (երեք հարյուր երեսունվեց ամբողջ վեց) ՀՀ դրամ: Համայնքի ղեկավարը առաջարկեց թույլատրել նշված հողատեսքը աճուրդ վաճառքով օտարել, որը կապահովի բյուջեի մուտքային մասը: Առաջարկություններ և առարկություններ չեղան: Քվեարկության արդյունքում 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ</u>/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 76, 77 և 94-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Ակունք բնակավայրի 05-008-0005-0047 ծածկագրով 0,4165հա գյուղատնտեսական

նշանակության 2-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Ակունք բնակավայրի 05-008-0005-0048 ծածկագրով 1հա գյուղատնտեսական նշանակության 2-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Ակունք բնակավայրի 05-008-0212-0003 ծածկագրով 3.0325հա գյուղատնտեսական նշանակության 2-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով:

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Վարդենիս քաղաքի 05-005-0401-0076 ծածկագրով 4.97952հա գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով:

5. Հաստատել վարձակալության տրամադրվող 2-րդ կագի վարելահողի տարեկան մեկնարկային գինը 1հա-ի համար 7400 (յոթ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

6.Հաստատել վարձակալության տրամադրվող 4-րդ կարգի վարելահողի տարեկան մեկնարկային գինը 1հա-ի համար 3900 (երեք հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ շարունակական աշխատանքների արդյունքում ի հայտ են եկել վարելահողեր, որոնք չունեն սահմանված կարգով վարձակալության պայմանագրեր, օրինական դաշտ բերելու համար առաջարկեց ներկայացված հողակտորները վարձակալության տրամադրելու համար տալ համաձայնություն:
Համայնքի ղեկավարը հայտարարեց քվեարկություն՝ արդյունքում 25 կողմ 0 դեմ 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29-Ա/

Լսեցին

***ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ</u>/***

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N16-Ն որոշման 3-րդ գլխի 9-րդ կետի դրույթներով Վարդենիս համայնքի ավագանին որոշում է՝

1.Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը վարձակալությամբ տրամադրելու համաձայնություն ստանալու համար դիմել Գեղարքունիքի մարզպետին.

1.1 Տորֆավան բնակավայր՝ ծածկագիր 05-089-0052-0041, սեփականության իրավունքի վկայական՝ N 07112023-05-0016, վարելահող՝ 2,07269հա :

1.2 Տորֆավան բնակավայր՝ ծածկագիր 05-089-0052-0039, սեփականության իրավունքի վկայական՝ N 02112023-05-0074, վարելահող՝ 4,53414հա:

1.3 Տորֆավան բնակավայր՝ ծածկագիր 05-089-0052-0045, սեփականության իրավունքի վկայական՝ N 02112023-05-0019, վարելահող՝ 4,76867հա:

1.4 Տորֆավան բնակավայր՝ ծածկագիր 05-089-0052-0043, սեփականության իրավունքի վկայական՝ N 02112023-05-0010, վարելահող՝ 1,02335հա:

1.5 Տորֆավան բնակավայր՝ ծածկագիր 05-089-0052-0046, սեփականության իրավունքի վկայական՝ N 02112023-05-0021, վարելահող՝ 1.70241հա:

1.6 Տորֆավան բնակավայր՝ ծածկագիր 05-089-0052-0040, սեփականության իրավունքի վկայական՝ N 02112023-05-0033, վարելահող՝ 1.0243հա:

1.7 Տորֆավան բնակավայր՝ ծածկագիր 05-089-0052-0042, սեփականության իրավունքի վկայական՝ N 02112023-05-0079, վարելահող՝ 2.97728հա:

1.8 Տորֆավան բնակավայր՝ ծածկագիր 05-089-0051-0007, սեփականության իրավունքի վկայական՝ N 02112023-05-0051, վարելահող՝ 3,66538հա:

1.9 Տորֆավան բնակավայր՝ ծածկագիր 05-089-0052-0044, սեփականության իրավունքի վկայական՝ N 02112023-05-0078, վարելահող՝ 3,06028հա:

1.10 Տորֆավան բնակավայր՝ ծածկագիր 05-089-0052-0072, սեփականության իրավունքի վկայական՝ N 02112023-05-0063, վարելահող՝ 0,82429հա:

1.11 Տորֆավան բնակավայր՝ ծածկագիր 05-089-0051-0004, սեփականության իրավունքի վկայական՝ N 02112023-05-0020, վարելահող՝ 7,4304հա:

1.12 Տորֆավան բնակավայր՝ ծածկագիր 05-089-0050-0001, սեփականության իրավունքի վկայական՝ N 02112023-05-0048, վարելահող՝ 29,71572հա:

1.13 Տորֆավան բնակավայր՝ ծածկագիր 05-089-0052-0071, սեփականության իրավունքի վկայական՝ N 02112023-05-0018, վարելահող՝ 20,21908հա:

1.14 Տորֆավան բնակավայր՝ ծածկագիր 05-089-0051-0005, սեփականության իրավունքի վկայական՝ N 02112023-05-0006, վարելահող՝ 6,58712հա:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը վարձակալության տրամադրելու թույլտվություն ստանալու մասին է, խոսքը վերաբերվում է Տորֆավան բնակավայրի պետական սեփականություն հանդիսացող հողերին, որոնք չունեն սահմանված կարգով վարձակալության պայմանագրեր, ուստի համայնքի ղեկավարը առաջարկեց տալ համաձայնություն, մարզպետին դիմելու և թույլտվություն ստանալու համար: Համայնքի ղեկավարը հայտարարեց քվեարկություն՝ արդյունքում 25 կողմ 0 դեմ 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28-Ա/

Լսեցին

***ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-6» ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ</u>/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, ՀՀ Կառավարության 29.12.2011թ.«ՀՀ համայնքների (բնակավայրերի) գլխավոր

հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջները հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտողարի 22/04/2024թ. N02//1576-2024 գրությունը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեիր մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-8 եզրակացությունը համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գեղարքունիք-6» միկրոռեգիոնալ (Գեղամասար, Սոթք, Ազատ, Ավազան, Արեգունի, Արփունք, Գեղամաբակ, Դարանակ, Կախակն, Կութ, Կուտական /Ջառիվեր/, Նորաբակ, Շատջրեք, Շատվան, Ջաղացաձոր, Տրետուք, Փամբակ, Փոքր Մասրիկ բնակավայրեր) մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ նախորդ հարցի շարունակությունն է և խոսքը վերաբերվում է Գեղամասար, Սոթք, Ազատ, Ավազան, Արեգունի, Արփունք, Գեղամաբակ, Դարանակ, Կախակն, Կութ, Կուտական, Նորաբակ, Շատջրեք, Շատվան, Ջաղացաձոր, Տրետուք, Փամբակ, Փոքր Մասրիկ բնակավայրերի գլխավոր հատակագծերին:

Հարցը դրվեց քվեարկության՝ արդյունքում 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Համայնքի ղեկավարը հայտարարեց 30 րոպե ընդմիջում:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27-Ա/

Լսեցին

***ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-5» ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ</u>/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, ՀՀ Կառավարության 29.12.2011թ.«ՀՀ համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջները հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտողարի 22/04/2024թ. N02//1576-2024 գրությունը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեիր մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-7 եզրակացությունը համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գեղարքունիք-5» միկրոռեգիոնալ (Վարդենիս համայնք՝ Վարդենիս քաղաք, Այրք, Ներքին Շորժա Վերին Շորժա բնակավայրեր) մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ խոսքը վերաբերվում է Վարդենիս քաղաքի, Այրք, Վերին Շորժա, Ներքին Շորժա բնակավայրերի գլխավոր հատակագծերին, որոնք քննարկվել և կազմվել են վարչական ղեկավարների մասնակցությամբ, որը միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ստացել է դրական եզրակացություն:

Հարցը դրվեց քվեարկության՝ արդյունքում 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26-Ա/

Լսեցին

***2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՏՅՈՄ ՄԿՐՏՉՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 4-րդ 6-րդ և 25-րդ կետերով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է

Համաձայնություն տալ 2024 թվականի ընթացքում Վարդենիս համայնքում նպատակային հետևյալ սուբվենցիոն ծրագրի իրականացմանը

1. Վանեվան բնակավայրի Գարագաշի փողոցի ասֆալտապատում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ առաջարկելով տալ հավանություն Վանեվան բնակավայրի Գարագաշի փողոցի ասֆալտապատմանը:

Համայնքի ղեկավարը հայտարարեց քվեարկություն: 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25-Ա/

Լսեցին

***ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2023Թ.-Ի ''ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/՝ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, N 5-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 -րդ հոդվածի

28-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Վարդենիս համայնքի ավագանու 2023թ. հունվարի 24-ի <<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/՝ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 5-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Վարդենիս համայնքի թիվ 1 մանկական երաժշտական դպրոց ՀՈԱԿ>>-ի հաստիքացուցակում կատարել փոփոխություն՝ 9-րդ տող՝ << բույժքույր 0,5 միավորը փոխարինել 1,0 միավորով>>:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ խոսքը վերաբերվում է թիվ 1 ՄԵԴ-ի բուժքրոջ հաստիքին, հաշվի առնելով աշխատանքի կարևորությունը և ծանրաբեռնվածությունը , առաջարեց նախկինում հաստատված 0,5 միավորը դարձնել 1 միավոր: Առաջարկություններ և առարկություններ չեղան, քվեարկության արդյունքում 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024-2026ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, և <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Քննարկել և հաստատել Վարդենիս համայնքի 2024-2026թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը ներկայացրեց հարցը.

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի դրույթների իրագործման հիմնական գործիքը, որը հնարավորություն է տալու առավել իրատեսական, առարկայական դարձնել համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը՝ առաջիկա երեք տարվա համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրն t (ՄԺԾԾ): Այն հստակեցնում է եռամյա ժամանակահատվածում համայնքի ծախսային քաղաքականությունը տարեկան կտրվածքով:

Ձեզ եմ ներկայացնում 2024-2026 թվականների եկամտային և ծախսային մասը՝
2024թ. եկամուտներ՝ հինգ միլիարդ յոթ հարյուր տասնյոթ միլիոն չորս հարյուր քսանյոթ հազար դրամ, ծախսեր՝ հինգ միլիարդ ութ հարյուր վաթսուն միլիոն հարյուր տասներկու հազար դրամ.
2025թ. եկամուտներ՝ հինգ միլիարդ ութ հարյուր վաթսունչորս միլիոն ութ հարյուր տասներեք հազար դրամ, ծախսեր՝ վեց միլիարդ տասնչորս միլիոն ութ հարյուր տասներեք հազար դրամ,
2026թ. եկամուտներ՝ վեց միլիարդ հարյուր վաթսունյոթ միլիոն չորս հարյուր ութսուն հազար դրամ, ծախսեր՝ վեց միլիարդ երկու հարյուր հիսունյոթ միլիոն չորս հարյուր ութսուն հազար դրամ.

Ինչպես գիտենք, նախկինում մեր կողմից հաստատվել է 2024-2026թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, սակայն անհրաժեշտություն է առաջացել ավելի մանրամասն բացատրագրով ներկայացնելու տարածքային կառավարման նախարարություն, որից հետո կտեղադրվի համայնքի պաշտոնական կայքում:

Հարցը դրվեց քվեարկության: Արդյունքում՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 23-Ն/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ</u>/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ղեկավարի զեկուցումը 2023 թվականի տարեկան բյուջեի կատարողականը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանը՝ նշելով, որ վարչական բյուջեն պլանավորվել է երկու միլիարդ հինգ հարյուր քսան միլիոն վեց հարյուր քսանվեց ու մեկ հազար դրամ, փաստացի կատարվել է երկու միլիարդ հինգ հարյուր քառասունչորս միլիոն ութ հարյուր ութսունութ ու երկու հազար դրամ կամ 101,1 տոկոս: Սեփական եկամուտները մեկ միլիարդ տասնմեկ միլիոն յոթանասունութ հազար եկամուտի դիմաց փաստացի կատարվել է մեկ միլիարդ երեսունհինգ միլիոն երեք հարյուր քառասուն դրամ կամ 104,8 տոկոսով:

Ծախսերը պլանավորվել է երկու միլիարդ հինգ հարյուր քսան միլիոն վեց հարյուր քսանվեց հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է երկու միլիարդ չորս հարյուր ինը միլիոն երկու հարյուր իննսունհինգ հազար դրամ կամ 95,6 տոկոս: Ծախսերի տնտեսումները կատարվել են բոլոր գործառնական և տնտեսագիտական հոդվածներով: Տարեվերջի ազատ մնացորդը կազմել է հարյուր քառասուներկու միլիոն երկու հարյուր հազար դրամ:

Համայնքի ղեկավարը նշեց, որ ավելի մանրամասն հարցը կներկայացնի ֆինսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի տեղակալ Պավլիկ Պողոսյանը՝

-Հարգելի՛ ավագանիներ և ներկաներ, Վարդենիսի համայնքապետարանի 2023թ վարչական բյուջեի եկամուտների պլանը կազմել է 2520626.1հ/դ փաստացի կատարվել է 2544888.2հ/դ կամ 101 %-ով սեփական ամրացված եկամուտները 1011078.7հ/դ դիմաց կատարվել է 1035340.9հ/դ կամ 102.4: Եկամուտներից հիմնականում գերակատարվել են Գույքահարկ տրանսպորտային միջոցներից 39559.9հ/դ, Հողի հարկի նախորդ տարիների պարտքից 3657.7հ/դ, Այլ գույքի վարձակալությունից 11327.3հ/դ: Թերակատարվել են անշարժ գույքի հարկից 20017.9հ/դ հողի վարձակալության վճարներից 1102.5հ/դ: Պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջեին հատկացվել է 459707.3հ.դ սուբվենցիոն ծրագրերի կատարման համար:

Ելույթով հանդես եկավ ավագանու անդամ Նաիրա Մանուչարյանը հարց ուղղելով, թե արդյոք ո՞ր փուլում են գտնվում այն հողերի հարկման հարցերը, որոնք գտնվում են թշնամու նշանառության տակ, քանի որ մարզպետը խոստացել է, որ հողերը մնալու են բնակիչներին, իրենք հարկեր չեն վճարելու այնքան ժամանակ, մինչև որ վիճակը հարթվի, որևէ քաղաքականություն մշակվել է, թե՞ ոչ: Ի պատասխան համայնքի ղեկավարը նշեց, որ մարզպետը պահանջել է տարածքների տվյալները, որոնք բնակիչները չեն կարողացել մշակել, դա ուղարկվել է մարզպետարան, որը իր հերթին ուղարկվել է նախարարություն և գտնվում է քննարկման փուլում, երբ ստանանք որևէ պատասխան, ավագանու նիստի ժամանակ կհայտարարվի:

Ծ Ա Խ Ս Ե Ր

Վարչական բյուջեի ծախսերը պլանավորված 2520626.1հ/դ պլանի դիմաց փաստացի կատարվել է 2409294.6հ/դ՝

1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ապարատի և վարչական ղեկավարների պահպանման համար ծախսվել է 613548.8հ/դ կամ վարչական բյուջեի 25.5%:

2. Տնտեսական հարաբերություններ Ծախսվել է 742137.6հ/դ կամ վարչական բյուջեի 30.8 տոկոսը՝ որից, 547089.4հ/դ աշնանացան ցորեն ցանքսերի սուբսիդիա, և կոմունալ տնտեսություն բարեկագում ՀՈԱԿ-ի ծախսերը 196100.2հ/դ :

3.Շրջակա միջավայրի և բնակարանային շինարարության և կումունալ ծախսերը կազմում է 70722.9հ/դ, որը վարչական բյուջեի 2.9տոկոս որը աղբահեռացման ծախսն է 13300.0հ/դ և փողոցային լուսավորության էներգետիկ, և պահպանման ծախսերն են:

4. Հանգստի մշակութի և կրոնի ծախսերը կատարվել է 89611.9 հ/դ կամ 3.7%, որից սպորտային և մշակույթային միջոցառումների համար ծախսվել է 6231.9հ/դ ՝ գրադարանների պահպանման ծախսերը 28190.8հ/դ և մշակութի տների ակումբների ծախսերը 55189.2հ/դ:

5. Կրթական ծախսերը կազմել են 407712.6հ/դ կամ բյուջեի 16.9% , որից նախադպրոցական հիմնարկների մանկապարտեզների պահպանման ծախսերը 236009.9հ/դ, մնացած ՀՈԱԿ-ն մանկական երաժշտական դպրոցների սպորտ դպրոցների գեղարվեստի դպրոցի համար՝ 171702.7հ/դ:

6. Սոցիալական պաշտպանության համար ծախսվել է 7236.0հ/դ կամ բյուջեի 0.3տոկոսը. հիմնականում տրվել է անապահով ընտանիքներին օգնություն ավագանիների որոշումների հիման վրա:

7.Պահուստային ֆոնդ 478324.7հ/դ կամ 19.9%, որից 459707.3հ/դ փոխանցվել է ֆոնդային բյուջե սուբվենցիոն ծրագրերի կատարման համար՝ մնացած 18617.4հ/դ ծախսվել է

ա/ Մ.Մասրիկ և Կարճաղբյուր բնակավայրերի դպրոցների նախակրթարանների բացման համար համայնքի ներդրում 3598.0հ/դ:

բ/ Ակունք բնակավայրի մշակութի տան ըմբշտամարտի դահլիճի վերանորոգման համար համայնքային ներդրում 2341.8հ/դ

գ/ Գազի վարձավճար 752.4հ/դ:

դ/ Գյումրիում Համահայկական խաղերի բացման և Գառնիում փակման արարողություններին մասնակցելու համար /կացարանի սննդի , հագուստի և կոշիկների համար 1946.4հ/դ:

ե/ Ամանօրի կապակցությամբ քաղաքի զարդարման համար 9978.6հ/դ: Ծախսերի մեջ աշխատավարձը կազմում է 4111 հոդվածով՝ 497811.7հ/դ ,պարգևավճարները՝ 4112հոդվածով 46697.5հ/դ , էներգետիկ ծախսերը՝ 4112 հոդվածով 60055.8հ/դ, գործուղման ծախսերը՝ 4221 հոդվածով 3500.0հ/դ: Ընդհանուր բնույթի այլ ծառայությունները 472098.8հ/դ, հիմնականում ՀՈԱԿ-ների պահպանման ծախսերն են, 4264հոդվածով 13820.7հ/դ համայնքին պատկանող տրանսպորտային միջոցների պահպանման ծախսերն են:

Ֆոնդային բյուջեի ծախսերը հիմնականում սուբվենցիոն ծախսերն են, որը կազմում է 971103.1հ/դ, որից կապ շինարարության համար՝ 5112հոդվածով 560165.7հ/դ, 5113 հոդվածով՝ 357688.5հ/դ, 5121 հոդվածով տրվել է լիզինգներով ձեռք բերված գյուղատնտեսական տեխնիկաների լիզինգների վարձավճար և տոկոսներ, 5122 հոդվածով՝ 4720.9հ/դ ձեռք է բերվել համակարգիչներ տպիչ սարքեր, 5129 հոդվածով 2556.8հ/դ ձեռք է բերվել և փոխվել են համայնքի ապարատի շենքի ինչպես նաև վարչական ղեկավարների նստավայրերի դռներ պատուհաններ և այլ հիմնական միջոցներ, 5132հոդվածով 250.0հ/դ ձեռք է բերվել հաշվապահական հաշվառման ծրագիր, 5134հոդվածով 4100.0հ/դ ձեռք է բերվել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր Գեղամասարի մանկապարտեզի նորոգման համար 2350.0հ/դ Սոթքի 4 բնակարանների համար 950.0հ/դ և Ակունքի ըմբշտամարտի դահլիճի նորոգման համար 800.0հ/դ:

Հարցը. դրվեց քվեարկության, արդյունքում 14 կողմ, 0 դեմ, 11 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-11

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22-Ն/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել՝ 2024 թվականի մարտի 22-ին կայանալիք Վարդենիս համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը՝ բաղկացած 13 հարցից.

1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԶԵԿՈՒՅՑՈՒՄԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024-2026ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2023Թ.-Ի ''ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/՝ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, N 5-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4.2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

5.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-5» ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-6» ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼու ՄԱՍԻՆ

8.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ Օ. ՍԻՄՈՆՅԱՆ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 10 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍՈԹՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑ 20 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023Թ. N 177-Ա, N 178-Ա, N 179-Ա, N 180-Ա, N 182-Ա, N 183-Ա և N 184-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12.<<ԱՍՏՂԱՎԱՐԴ>> ՀԿ ՀԱՃԱԽՈՂ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՁՄԵՌՎԱ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՋԵՌՈՒՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՓԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ

## ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2024 թվականի մարտի 22-ին ժամը 14:00-ին կայացավ Վարդենիս համայնքի ավագանու հերթական նիստը: Ավագանու 27 անդամներից նիստին ներկա էին 25-ը, բացակայում էին <<Քաղաքացիաան պայմանագիր խմբակցության>> ավագանու անդամներ Արամ Մելքոնյանը, Արտակ Մանուկյանը: Նիստը իրավազոր է: Նիստը վարում է համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը: Նիստին մասնակցում էին աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի տեղակալ Պավլիկ Պողոսյանը, քաղաքաշինության հողօգտագործման և հողաշինության բաժնի պետ Աբգար Աբգարյանը, համայնքի ղեկավարի օգնական Ա. Եղիազարյանը, համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Է. Պետրոսյանը և այլ անձինք: Համայնքի ղեկավարը շնորհավորեց կանանց՝ տոների կապակցությամբ: Համայնքի ղեկավարը ընթերցեց օրակարգի հարցերը՝ ըստ հերթականության, այնուհետև օրակարգը հաստատելու մասին հարցը դրվեց քվեարկության:

25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 21-Ա/

### Ավագանու անդամներ

ԱՐՄԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԲԱՋՈՅԱՆ

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԿ ԵՐԱՆՈՍՅԱՆ

ՄԵԼԱՆՅԱ ԵՓՐԵՄՅԱՆ

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԵԼԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ԽՉԵՅԱՆ

ԱՐԱՔՍՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՍՊԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՍԱԹԵՆԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՇԱԲՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԶԱՎԵՆ ՇՀՈՅԱՆ

ՌՈՄԵԼՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԻՄՈՆՅԱՆ

ՋԵՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*Նիստն արձանագրեց՝* Կատմ Հարությանը